ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «05» դեկտեմբերի 2017թ.

2017թ-ի դեկտեմբերի 05-ին՝ ժամը 16:00-ին, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48/1 , «Սախարով» բիզնես կենտրոնում, տեղի ունեցավ ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Դիանա	Վարդանյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ ընդհանուր բաժնի պետ
Աննա	Ավագյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ հաճախորդների սպասարկման մասնագետ
Տիգրան	Ավդալյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ"
Լիլիթ	Վարոսյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գլխավոր հաշվապահ-Հաշվապահական հաշվառման և ֆինանսական պլանավորման վարչության պետ
Նարեկ	Գրիգորյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ տնտեսվար-վարորդ:

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Տիրան Լաճիկյանը «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գնումների մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դիանա Վարդանյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/, վերջինիս/ներիս/ կողմից ներկայացված հայտի/երի/ գնահատման և առաջարկված գնի/երի/ մասին:
2. Առաջին /և հաջորդաբար/ տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ/ԵՐ/ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ/ԱՆՑ/, ՎԵՐՋԻՆԻՍ/ՆԵՐԻՍ/ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ/ԵՐԻ/ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ/ԵՐԻ/ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Դիանա Վարդանյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 2 500 000 ՀՀ դրամ:

ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի դեկտեմբերի 05-ին, ժամը «16:00»-ին:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձիք /այսուհետ՝ նաև մասնակիցներ/.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1.	«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ	ՀՀ, ք□ Երևան, Վ. Սարգսյան 10, տարածք 114
2.	«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 4/7, 7-րդ հարկ, Իմպերիում Պլազա
3.	«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, տարածք 54
4.	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 22, 5-րդ հարկ, տարածք 16

Որոշվեց՝

1. Դիանա Վարդանյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի, որոնք ստորագրված չեն էլեկտրոնային տարբերակով:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Ծառայության անվանումը և մասնակցի առաջարկած գինը՝ (ՀՀ դրամ)	
		Աուդիտորական ծառայություններ	
		Արժեք	Ընդհանուր գին
1.	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ	1 958 333	2 350 000
2.	«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ	2 000 000	2 400 000
3.	«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ	2 400 000	2 880 000

4.	«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ	5 000 000	6 000 000

Որոշվեց՝

1. Դիանա Վարդանյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

2. «Բեյքեր Թիլլի Արմենիա», «Բի-Դի-Օ Արմենիա» և «Աուդիտ Սերվիս» ընկերությունների կողմից ներկայացված հայտերը ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով գնահատել բավարար:

3. «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ԱՌԱՋԻՆ /ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ/ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել համապատասխանաբար «Բեյքեր Թիլլի Արմենիա», «Բի-Դի-Օ Արմենիա» և «Աուդիտ Սերվիս» ընկերություններին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 10:00-ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Դ. Վարդանյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ավագյան _____

Տ. Ավդալյան _____

Լ. Վարոսյան _____

Ն. Գրիգորյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____